



ԳՐԻԳՈՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի
ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՔԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել, վերլուծել և գնահատել ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող ներդրումներն ըստ ֆինանսական գործիքների և ուղղությունների: Քանակական վերլուծությունը կատարվել է երկու ուղղությամբ՝ ՀՀ առևտրային բանկերի արտաքին ներդրումային գործունեության վերլուծություն և ներքին ներդրումային գործունեության վերլուծություն:

Հիմնաբառեր. *առևտրային բանկ, ֆինանսական գործիք, արտաքին ներդրումային գործունեություն, ներքին ներդրումային գործունեություն*
JEL: G11, G24, G28

Բանկային համակարգում ներդրումային ռիսկի գնահատման միջազգային փորձը հանգում է հիմնականում ակտիվների փաթեթի վարկային ռիսկի, ինչպես նաև արժեթղթերի ու ածանցյալ գործիքներին առնչվող ռիսկերի կառավարման հիմնախնդիրներին, որոնց ամբողջական համադրումը ենթադրում է ներդրումային ռիսկի կառավարում:

Արևմտյան խոշոր բանկերի կողմից կիրառվող վարկային ռիսկի հաշվարկման մեթոդաբանությանը բնորոշ են հետևյալ երեք քայլերը.

- 1-ին փուլում դիտարկվում են վարկային ռիսկերը, որոնք կապված են վարկերի տրամադրման, ձեռք բերված պարտատոմսերի և այլ արժեթղթերի հետ: Այս փուլում ուսումնասիրվում են ինչպես շուկայական տատանողականությունը բնութագրող տվյալները, այնպես էլ բանկի

կողմից կիրառվող՝ ռեսուրսների բաշխման հնարավոր գործիքները:


- 2-րդ փուլում վերլուծության է ենթարկվում վարկի ռիսկայնության մակարդակը: Դիտարկվում են վարկային վարկանիշները և դրանց փոփոխության հավանականությունը, պարտավորությունների չկատարման դեպքում կորստի վերականգնման աստիճանը, վարկային սպրեդը և պարտատոմսերի կամ արժեթղթերի բերված արժեքը վերագնահատումից հետո: Այս գործոնները հնարավորություն են տալիս գնահատելու վարկի կամ արժեթղթերի որակի փոփոխման դեպքում ակտիվի արժեքի ստանդարտ շեղումը:
- 3-րդ փուլում ուսումնասիրվում և հաշվարկվում են ակտիվների միջև առկա կոռելյացիաները: Շեշտը հիմնականում դրվում է տնտեսաչափական (էկոնոմետրիկ) մոդելների վրա, որոնց միջոցով գնահատվում է վարկի կամ ձեռք բերված արժեթղթի որակի փոփոխության հավանականությունը:

Այս փուլերից հետո բանկը որոշում է՝ իր ներդրումներն ուղղել դեպի փոփոխ շուկա, թե կապիտալի շուկա, նաև՝ ինչպիսի ֆինանսական գործիքներ ձեռք բերել:

Հոդվածի շրջանակներում փորձ է արվել արևմտյան խոշոր բանկերի կողմից վարկային ռիսկի հաշվարկման մեթոդաբանության 1-ին փուլի պահանջները կիրառելու ՀՀ բանկային համակարգում, որի համատեքստում ուսումնասիրվել, վերլուծվել և գնահատվել են ՀՀ առևտրային բանկերի ներդրումներն ըստ ֆինանսական գործիքների և ուղղությունների: Քանակական վերլուծությունն իրականացվել է 2005–2017 թթ. համար՝ հետևյալ երկու ուղղությամբ՝

- ՀՀ առևտրային բանկերի արտաքին ներդրումային գործունեության վերլուծություն,
- ՀՀ առևտրային բանկերի ներքին ներդրումային գործունեության վերլուծություն:

ՀՀ առևտրային բանկերը 2005–2017 թթ. ընթացքում իրականացրել են 615.3 մլն ԱՄՆ դոլարի արտաքին ներդրումներ:



Գծապատկեր 1. *ՀՀ առևտրային բանկերի արտաքին ներդրումների մասնաբաժինը դրանց ընդհանուր ակտիվների մեջ (%)¹*

¹ Հաշվարկել է հեղինակը՝ հիմք ընդունելով 2005–2017 թթ. ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված վիճակագրական տեղեկագրերի տվյալները:
https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/tarekan_tex/vich_2005.pdf

2005 թ. գրանցվել է արտաքին ներդրումների ամենամեծ մասնաբաժինը առևտրային բանկերի ընդհանուր ակտիվներում՝ 22%: 2005–2008 թթ. ժամանակահատվածը բնութագրվել է այդ մասնաբաժնի անկմամբ, սակայն ՀՀ-ում ֆինանսական ճգնաժամի տարիներին այդ ցուցանիշը նորից աճել է՝ 2009–2010 թթ. կազմելով 14%: Հարկ է նկատել, որ միայն 2009 թ., երբ ՀՀ տնտեսական անկումը կազմել է 14.1%, առևտրային բանկերի կողմից արտաքին ներդրումներն աճել են 1.5 անգամ՝ կազմելով 201 մլն ԱՄՆ դոլար:

2005–2016 թթ. ՀՀ առևտրային բանկերի օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են 53.7 մլն ԱՄՆ դոլար, որից 18 մլն ԱՄՆ դոլարը՝ օտարերկրյա կազմակերպությունների բաժնետիրական կապիտալում: Պետք է նկատել, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից 2012–2014 թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումներ չեն իրականացվել:


Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ առևտրային բանկերի օտարերկրյա պորտֆելային ներդրումները կազմել են 46.5 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում. 19.9 մլն ԱՄՆ դոլարը՝ բաժնետոմսերում, իսկ 26.5 մլն ԱՄՆ դոլարը՝ պարտքային պարտավորությունների մեջ:

Հատկանշական է, որ ՀՀ առևտրային բանկերն իրենց միջոցներից միայն 5.6 մլն ԱՄՆ դոլարն են ներդրել օտարերկրյա պարտատոմսերում՝ 2005–2006 թթ. ընթացքում: 2014–2015 թթ. բանկերն օտարերկրյա ածանցյալ գործիքներում ներդրում են կատարել 5.7 մլն ԱՄՆ դոլարի չափով: Այս հանգամանքը նշանակալի է նրանով, որ նախկինում ՀՀ առևտրային բանկերը նման գործիքներում երբևէ ներդրումներ չեն կատարել:

Ընդհանուր առմամբ, ՀՀ առևտրային բանկերի կողմից 2005–2016 թթ. կատարված օտարերկրյա ներդրումների միայն 18.5%-ն է բաժին ընկնում ֆինանսական գործիքներին, մնացած 81.5%-ը կազմում են վարկերի ձևով կատարված ներդրումները:

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ առևտրային բանկերը կատարել են նաև 598.2 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա այլ ներդրումներ, որոնք տեղաբաշխել են վարկերի ու ավանդների տեսքով:

2005–2017 թթ. ՀՀ առևտրային բանկերի կողմից օտարերկրյա պետություններում վարկային ներդրումները կազմել են 270.7 մլն ԱՄՆ դոլար: Աձի տեմպը կազմել է 15.4 անգամ: Կտրուկ աճ է գրանցվել 2009 թ. սկսած. 2008 թ. համեմատությամբ օտարերկրյա վարկային ներդրումներն աճել են 5.76 անգամ, իսկ 2009–2017 թթ.՝ 2.33 անգամ: Փաստորեն, ճգնաժամային 2009 թվականը բեկումնային է եղել ՀՀ առևտրային բանկերի համար օտարերկրյա ներդրումների ծավալի կտրուկ աճի իմաստով:



Պճապատկեր 2. ՀՀ առևտրային բանկերի կողմից օտարերկրյա պետություններում տրամադրված վարկի ծավալները (նլն ԱՄՆ դոլար)²

Դիտարկվող 13 տարիների ընթացքում ՀՀ առևտրային բանկերի կողմից օտարերկրյա պետություններում ներդրված ավանդների ծավալը կազմել է 327.5 մլն ԱՄՆ դոլար: Հարկ է նկատել, որ ՀՀ առևտրային բանկերն ավելի շատ ավանդ են պահում դրսում, քան վարկային ներդրումներ իրականացնում: Օտարերկրյա պետություններում ներդրված ավանդների ծավալի աճը կազմել է 3.3 անգամ, ինչը զիջում է վարկային ներդրումների աճի տեմպին:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ բանկերն իրենց օտարերկրյա ներդրումների ակտիվների կեսից ավելին՝ 53.2%-ը, պահում են ավանդների տեսքով, 44%-ը՝ վարկային ներդրումների տեսքով:


ՀՀ առևտրային բանկերի ներքին ներդրումային գործունեության վերլուծությունն իրականացվել է արժեթղթերի, փայաբաժինների, պետական պարտատոմսերի և վարկերի մեջ կատարված ներդրումների համատեքստում:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից ՀՀ արժեթղթերում իրականացված ներդրումներն աճել են էքսպոնենցիալ (ցուցչային) արագությամբ: 2017 թ. բանկերի կատարած ներդրումները արժեթղթերում գերազանցել են 2005 թ. մակարդակը 556 անգամ՝ կազմելով 32.7 մլրդ ՀՀ դրամ: Ամենացածր մակարդակը գրանցվել է 2009 թ., երբ ՀՀ-ն գտնվում էր ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության տակ: Նշված տարում տեղական շուկայում լրացուցիչ իրացվելիություն հաղորդելու փոխարեն այդ գումարները դուրս են եկել Հայաստանից: Դիտարկվող 13 տարիների ընթացքում փայաբաժիններում իրականացված ներդրումների ծավալներն աճել են 39 անգամ՝ կազմելով 18 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ պետական պարտատոմսերում 2005–2017 թթ. կատարվել են 400 մլրդ ՀՀ դրամի ներդրումներ: Աճի տեմպը կազմել է 10.6 անգամ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից պետական պարտատոմսերում կատարված ներդրումների մասնաբաժինը վաճառված ծավալի մեջ՝ դիտարկվող տարիներին, միջին հաշվով, կազմել է 55.4%: Փաստորեն, ՀՀ-ում թողարկվող պետական պարտատոմսերի կեսից ավելին ձեռք են բերել առևտրային բանկերը:

² Տես նույն աղբյուրները:



Պճապատկեր 3. ՀՀ առևտրային բանկերի կողմից պետական պարտատոմսերում կատարված ներդրումների մասնաբաժինը վաճառված պետական պարտատոմսերի ծավալում (%)³

2008 թ. և 2014 թ. գրանցվել է ՀՀ առևտրային բանկերի թողարկած ՀՀ պետական պարտատոմսերի գնման ամենափոքր մասնաբաժինը՝ 21%: Դրանց թողարկման ամենամեծ՝ 72% մասնաբաժինը գրանցվել է 2005–2006 թթ., ինչպես նաև 2016 թ. և 2017 թ. հունվար-հուլիս ամիսներին՝ 85%:

Երբ դիտարկում ենք ՀՀ առևտրային բանկերի՝ ՀՀ պետական պարտատոմսերում կատարված ներդրումների մասնաբաժինը ընդհանուր ակտիվներում, պատկերը փոխվում է: 2005 թ. այդ ցուցանիշը 9.4%-ից նվազել է՝ 2015 թ. հասնելով 5.3%-ի՝ միջինում կազմելով 5.9%: 2016–2017 թթ. նշված ցուցանիշը փոքր-ինչ աճել է՝ կազմելով 11%: Իրավիճակը տարօրինակ է այն առումով, որ, մեր իրականացրած վերլուծության համաձայն, պետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունը դիտարկվող ժամանակահատվածում գերազանցել է առևտրային բանկերի կողմից տրամադրվող բիզնես վարկերի տոկոսադրույքը: Այլ կերպ ասած՝ բանկերը կարող էին 0% ռիսկի կշիռ ունեցող պետական պարտատոմսեր գնել ու ապահովել ավելի բարձր եկամուտ, քան տրամադրել 100% ռիսկի կշիռ ունեցող բիզնես վարկեր: Մյուս կողմից՝ 0% ռիսկի կշիռ ունեցող ակտիվների դեպքում կապիտալի լրացուցիչ պահանջ չի առաջանում բանկերի համար, մինչդեռ բիզնես վարկերի դեպքում համարժեք կապիտալ պետք է ունենա առևտրային բանկը: Անհասկանալի է՝ ինչպե՞ս է, որ ՀՀ ԿԲ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստեղծված իրավիճակում բանկերը կարող են 0% ռիսկի պարագայում ավելի շատ եկամուտ ունենալ, քան ռիսկային ներդրման դեպքում: Ավելին, նրանք չեն օգտվում այդ իրավիճակից, այլ հակառակը՝ նվազեցնում են պետական պարտատոմսերի մասնաբաժինը ակտիվների մեջ:

Ըստ մեր կատարած վերլուծության՝ ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները կազմել են 2.3 տրլն ՀՀ դրամ: Աճի տեմպը հավասար է 14 անգամի: Վարկային ներդրումների աճի տեմպը առնվազն 1.3 անգամ գերազանցում է ՀՀ պետական պարտատոմսերի մեջ ՀՀ առևտրային բանկերի կողմից կատարված ներդրումները:

ՀՀ-ում իրականացված վարկային ներդրումների մասնաբաժինը ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների մեջ, միջին հաշվով, կազմում է 52.6%: Այս ցուցանիշը, ի տարբերություն պետական պարտատոմսերի մասնաբաժնի, ընդհանուր ակտիվներում 41%-ից հասել է մինչև 61%-ի:

³ Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ըստ նշված աղբյուրների:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները՝

- ՀՀ առևտրային բանկերը նախընտրում են իրենց միջոցները պահել օտարերկրյա բանկերում՝ ավանդների ձևով:
- ՀՀ-ում գերակշռում են վարկային ներդրումները, այն դեպքում, երբ բիզնես վարկերի պարագայում պետական պարտատոմսերի ձեռքբերումը 0% ռիսկի պայմաններում ապահովում է ավելի բարձր եկամուտ:
- Ֆինանսական գործիքներում իրականացվող ներդրումները չեն գերազանցում ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների 8–10%-ը:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված վիճակագրական տեղեկագրեր, 2005–2017 թթ.
<https://www.cba.am/2005.pdf>, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017
2. Энциклопедия финансового риск-менеджмента /под ред. А.А. Лобанова, А.В. Чугунова/. М., 2009.
3. Уродовских В. Н., Управление рисками предприятия. М., 2012.
4. Васин С.М., Шутов В.С., Управление рисками на предприятии /учеб. пособие, 2-е изд./ М., «КНОРУС», 2010.

ГРИГОР КИРАКОСЯН

Аспирант кафедры управленческого учёта и аудита АГЭУ

Количественный анализ инвестиционной деятельности коммерческих банков РА.– Цель статьи – исследовать, проанализировать и оценить инвестиции коммерческих банков по финансовым инструментам и направлениям. Количественный анализ проведен по двум направлениям: анализ деятельности внешних инвестиций и анализ деятельности внутренних инвестиций.

Ключевые слова: *коммерческий банк, финансовые инструменты, внешне – инвестиционная деятельность, внутренне - инвестиционная деятельность.*

JEL: G11, G24, G28

GRIGOR KIRAKOSYAN

Post-graduate at the Chair of Managerial Accounting and Audit at ASUE

Quantitative Analysis of Armenian Commercial Banks' Investment Activities.– The main purpose of this article is to analyze and evaluate Armenian banks' investment activities by financial tools and according to the main directions. The quantitative analyze has been carried out in two directions – foreign investment activities and domestic investment activities.

Key words: *commercial bank, financial tools, foreign investment activities, domestic investment activities.*

JEL: G11, G24, G28